բայլին, վեղբօր հարսն, և զվեզիրն։ Տեսաք զսէրայններն և զայլ ամենայն սալթանաթն սէրային. գեղեցիկ շինուածք ոսկեղէն, արծաթեղէն և ճենահիրեղէն. ութը կամար մէկ մէկի վրայ, արծաթեղէն և թուրլու-թուրլու ամարաթով։

Եւ մին երկայն սրահ, որ է խաղալոյ տեղ, որ կէսն շինած էր, և զկէսն նոր կու շինէին. որ վեց միլիոն խարճ կու գնայր. որ իւր ղափուն էր, և ամենայն երկրի վրայ մէթհ անելու տեղ կայր. թահմին արաք որ ժզ միլիոնի զարդ կայր։

Այն տեղէն գնացաք 'ի պաղչան։ Առաջին նէրտիվանն[1] *կայր 5 հաւուզ ջրով լիլնք. և հաւուզներու մէջն կերպ-կերպ ծաղիկ շինովի պղնձէ ոսկէջրած. աջակողմեանն այնպէս, ձախակողմեանն այլ այնպէս։ Նորա ներքևն թէրրար տեսաք այլ ևս 5 հաւուզ մեծ ջրով լիլնք. մէջ ջրին ծովային ձի, և մարդիկ, որ բերաններէն ջուր կու փչէր. և հաւուզներու բոլորն՝ գորտներ, մէյմունններ և ամենայն ազգ կենդանիներ՝ որ ջուր կու փչէին։ Եւ նորա ներքևն հաւուզ մի այլ կայր բոլոր և մեծ, որ չորս բոլորն՝ չորս եղանակն է, և ամենայն եղանակն՝ իւր կենդանիքնէր՝ որ բերաններովն ջուր կու փչէին։ Եւ նորա ներքևն կայր երկայն ծով մի, որոյ մէջն կայր 17 նաւ մեծ և փոքր՝ ոսկով զարդարած, թօփով և առանց թօփի. զայս գրածներս սէրայէն կու բռնես մինչև 'ի ներքին կողմն։ Իսկ յայս կողմս և յայն կողմն կայ անպատմելի արարմունք. 36 դուռն ունի երկաթէ. ամէն դուռն մէջ 36 կերպ շինուածք ունի, որն երկաթի, որն քարի, որն մէրմէրի, որն պղնձի. ամէնն ոսկով վարաղած։ Որչափ ծովային, օդային, լեռնային և դաշտային, և որչափ Աստուծոյ ստեղծուածք որ կան՝ կերպ-կերպ թռչունք, անասունք, գազանք, սողունք, լողունք, ամէնն շինած էր, ամէնու բերնէն ջուր կու թռչի։ Այսքան շինուածին մեծութիւնն բ միլ է, որն որ ամէնն շինուածով լի է. 3 միլն՝ մին աղաճ է, 6 աղաճն մին մէնզիլ է. այս բ միլ տեղն ամէնն շինուածք է. գետնի տօշամէն արճիճ է. արճճի գինն 45 միլիոն է. որ 45 միլիոնն կանէ Օսմանցւոց 90000 քէսան։ Այս ներսի շինուածքն է. թող դըրսի շինուածքն, որ բ այնչափ է։ Եւ 'ի թագաւորի սերայն բ թալայ կայ, որ սէրայի դիմացն է. թալայ ասելն տիվանխանայէ. 55 միլիոն է. թող զմիջինն և զէթրաֆն։*

Ելեալ անտի՝ գնացաք 'ի զուշխանան. տեսաք անհուն թռչունք՝ ազգ և ազգ կերպ թռչունք։ Կայր քէնքուլաւոր հաւ մի, որ 600 դուռուշ էր. օրն մի դուռուշ խարջ ունէր։ Կայր օրդակ[2] *մի,*

[1] В скобках курсивом: *սանդուխք.*

[2] В скобках курсивом: *բադ, փափի.*

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան